ՕԳՏԱԿԱՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ (ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ) ԼՐԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՆՎԱԶԵՑՎՈՂ), ԴՐԱՆՑ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կապույտ գույնով նշված են հարկվող եկամուտները:
Հարկվող եկամուտներում բացառություն կազմող նվազեցվող եկամուտները նշված են կանաչ գույնով:

Կանաչ գույնով նշված են նվազեցվող (չհարկվող) եկամուտները:
Նվազեցվող (չհարկվող) եկամուտներում բացառություն կազմող հարկվող եկամուտները նշված են կապույտ գույնով:

ԱՆԿԱԽ ԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԻՑ՝ ՆՎԱԶԵՑՎՈՂ (ՉՀԱՐԿՎՈՂ) ԲՈԼՈՐ ԱՅՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԸ ՍՏԱՆՈՒՄ Է ԻՐ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՑ, ԵՆԹԱԿԱ ՉԵՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ (ԼՐԱՑՄԱՆ):

Ընտանիքի անդամներ են համարվում ֆիզիկական անձի ամուսինը, ծնողները, քույրերը, եղբայրները, զավակները (որդեգրողներն ու որդեգրվածները), պապերը, տատերը և թոռները:

1. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ (ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ)

Լրացվում է Պարզեցված հաշվարկի 1.5 սյունակում, եթե աշխատավարձը ստացվում է եկամտային հարկի հաշվարկման (վճարման) պարտավորությունից ազատված հարկային գործակալից:

Լրացվում է հաշվարկ (հայտարարագրի) 1.1.5 տողում, եթե աշխատավարձը ստացվում է հարկային գործակալից:

Լրացվում է հաշվարկ (հայտարարագրի) 3.4 տողում, եթե աշխատավարձը ստացվում է հարկային գործակալ չհանդիսացողից:

Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ են համարվում ՀՀ աշխատանքային օրենսգրքին համապատասխան որոշակի ժամկետով և անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի (հրամանի) շրջանակներում վարձու աշխատողին իր կատարած աշխատանքի դիմաց գործատուի կողմից տրվող հատուցումը, որը ներառում է հիմնական և լրացուցիչ աշխատավարձը: Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներն են՝

- աշխատավարձը (հիմնական աշխատավարձ, լրացուցիչ վարձատրություն)՝ ներառյալ արտաժամյա աշխատանքի վարձատրությունը, գիշերային աշխատանքի վարձատրությունը, հանգստյան և ոչ աշխատանքային (տոնական և հիշատակի) օրերին կատարված աշխատանքի վճարումը, լրավճարները, հավելումներ, հավելավճարները և պարգևատրումները (անկախ վճարման պարբերականությունից և ֆինանսավորման աղբյուրներից).
- աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներից տրվող միանվագ գումարները (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում տրվող փոխհատուցման գումարների, այդ թվում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վճարվող ժամանակավոր անաշխատունակության նպաստների գումարների, օգնության գումարների, ինչպես նաև վարձու աշխատողների սոցիալական կարիքների բավարարման նպատակով տրվող գումարների).
- պարապուրդի ժամանակ վճարումը, այդ թվում նաև՝ նախկին աշխատանքում վերականգնվելու դեպքում հարկադիր պարապուրդի դիմաց վճարված աշխատավարձը, օրինական գործադուլին մասնակցող աշխատողներին վճարումը, լրացուցիչ և հատուկ ընդմիջումների

վճարումը, աշխատանքի ծավալի ավելացման դեպքում աշխատանքի վարձատրությունը, առողջության ստուգման համար ծախսվող ժամանակի համար վճարումը (եթե աշխատողի առողջության ստուգումը պարտադիր է և պայմանավորված է աշխատանքի բնույթով).

→ ամենամյա (նվազագույն, երկարացված, լրացուցիչ) և նպատակային (ուսումնական, պետական կամ հասարակական պարտականությունների կատարման համար) վճարովի արձակուրդի գումարները, ինչպես նաև աշխատանքային պայմանագիրը լուծելիս (աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի գործողությունը դադարեցնելիս) չօգտագործված արձակուրդի համար վճարվող հատուցումը (փոխհատուցումը).

→ հեղինակային վարձատրությունը (բացառությամբ Ռոյալթիների):

2. ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՈՒՄԻՑ ԿԱՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Լրացվում է Պարզեցված Հաշվարկի 1.6 սյունակում, եթե եկամուտը ստացվել է եկամտային հարկի հաշվարկման (վճարման) պարտավորությունից ազատված հարկային գործակալից:

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 1.1.6 տողում, եթե եկամուտը ստացվել է հարկային գործակալից:

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 3.5 տողում, եթե եկամուտը ստացվել է հարկային գործակալ չհանդիսացողից:

Քաղաքացիական պայմանագրերի շրջանակներում՝

→ աշխատանքի կատարում է համարվում գործողությունը, որի արդյունքն ունի նյութական բնույթ և կարող է օտարվել այլ անձի կարիքների և (կամ) պահանջմունքների բավարարման համար:

Աշխատանքի կատարում է համարվում աշխատանքի կատարման արդյունքի սեփականության իրավունքի փոխանցումը մեկ անձից մեկ այլ անձի՝ որևէ ձևով կատարվող հատուցմամբ (այդ թվում՝ մասնակի հատուցմամբ կամ դրամաշնորհների կամ սուբսիդիաների ձևով հատուցմամբ) կամ անհատույց:

→ Ծառայության մատուցում է համարվում գործողությունը, որի արդյունքը չունի նյութական բնույթ, և որը ստացողը սպառում է այդ գործողության ընթացքում:

Ծառայության մատուցում է համարվում մեկ անձի կողմից մեկ այլ անձի օգտին գործողության իրականացումը՝ որևէ ձևով կատարվող հատուցմամբ (այդ թվում՝ մասնակի հատուցմամբ կամ դրամաշնորհների կամ սուբսիդիաների ձևով հատուցմամբ) կամ անհատույց:

3. ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ, ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ

Լրացվում է Պարզեցված Հաշվարկի 1.7 սյունակում, եթե նպաստը ստացվել է եկամտային հարկի հաշվարկման (վճարման) պարտավորությունից ազատված հարկային գործակալից:

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 1.1.7 տողում, եթե նպաստը ստացվել է հարկային գործակալից:

Ժամանակավոր անաշխատունակության նպաստի միջոցով մասնակիորեն փոխհատուցվում է գործատուների հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող ֆիզիկական անձանց ժամանակավոր անաշխատունակության հետևանքով կորցրած աշխատավարձը (եկամուտը), որն անձը ստանում էր կամ կարող էր ստանալ:

Ժամանակավոր անաշխատունակության նպաստներ են համարվում «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքով սահմանված՝

→ հիվանդության (վնասվածքի) պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում տրվող նպաստը (առաջին հինգ աշխատանքային օրվա համար),

- պրոթեզավորման պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում տրվող նպաստը,
- առողջարանային բուժման անհրաժեշտության պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում տրվող նպաստը,
- ընտանիքի անդամի հիվանդության (վնասվածքի) պատճառով առաջացած խնամքի անհրաժեշտությամբ պայմանավորված ժամանակավոր անաշխատունակության դեպքում տրվող նպաստը:

«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքով սահմանված մայրության նպաստի միջոցով՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի (արձակուրդի իրավունք ունենալու) ժամանակահատվածում մասնակիորեն կամ ամբողջությամբ փոխհատուցվում է վարձու աշխատողի, անհատ ձեռնարկատիրոջ (նոտարի) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով կորցրած աշխատավարձը (եկամուտը):

ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 2.1 տողում:

Չաշխատող կանանց մայրության նպաստը վճարվում է «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Նշված օրենքով սահմանված մայրության նպաստը համարվում է նվազեցվող եկամուտ և եկամտային հարկով հարկման ենթակա չէ:

4. ԱՅԼ ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶԱ (ԱՇԽԱՏՈՂԻ ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ)

Լրացվում է Պարզեցված Հաշվարկի 1.8 սյունակում, եթե եկամուտը ստացվել է եկամտային հարկի հաշվարկման (վճարման) պարտավորությունից ազատված հարկային գործակալից:

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 1.1.8 տողում, եթե եկամուտը ստացվել է հարկային գործակալից:

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 3.19 տողում, եթե եկամուտը ստացվել է հարկային գործակալ չհանդիսացողից:

Աշխատողի հարկվող այլ եկամուտներ են համարվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմաները (չափերը) գերազանցող՝ աշխատանքային պայմանագրի շրջանակներում աշխատանքների կատարման հետ կապված աշխատողների ստացված փոխհատուցման վճարները:

Մասնավորապես, աշխատողների ստացված փոխհատուցման վճարների թվին են դասվում՝

- գործուղման ծախսերի (օրապահիկ, գիշերավարձ, տրանսպորտային ծախսեր, ժամանակավոր գրանցման հետ կապված ծախսեր և այլ) փոխհատուցման գումարները.
- դաշտային պայմաններում և տեղափոխման (տեղաշարժման) աշխատանքների կատարման դեպքում տրվող հատուցման գումարները.

Այլ հարկվող եկամուտների թվին են դասվում նաև՝

- պրակտիկանտին (փորձնակին, ուսուցում անցնող աշակերտին) վճարվող գումարները
- գործատուի մեղքով աշխատավարձի և վճարման ենթակա այլ գումարների վճարումը պայմանագրով կամ գրավոր ձեռք բերված համաձայնությամբ սահմանված ժամկետների խախտման համար աշխատողին վճարվող տուժանքը
- գործատուի կողմից իր վարձու աշխատողների առողջության ապահովագրության համար կատարվող ապահովագրավճարները՝ յուրաքանչյուր աշխատողի համար եկամտի ստացման ամսվա հաշվով 10,0 հազ. դրամը գերազանցող չափով:

5. ՌՈՅԱԼԹԻ

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 1.2.5 տողում, եթե եկամուտը ստացվել է հարկային գործակալից:

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 3.8 տողում, եթե եկամուտը ստացվել է հարկային գործակալ չհանդիսացողից (այդ թվում՝ եկամտային հարկի հաշվարկման (վճարման) պարտավորությունից ազատված հարկային գործակալից):

Ռոյալթի է համարվում ֆիզիկական անձի մտավոր սեփականության և ոչ գույքային այլ իրավունքների օգտագործումից ստացված կամ ստացման ենթակա եկամուտը: Մասնավորապես, ռոյալթի է այն եկամուտը, որը ստացվել է ֆիզիկական անձի (հեղինակի, այդ թվում՝ հեղինակի ժառանգների)՝

- գյուտերի, արտոնագրերի, հեղինակային իրավունքի օգտագործման համար.
- գրականության, գիտության կամ արվեստի՝ ներառյալ հեռուստատեսության կամ ռադիոհաղորդակցության համար կինոֆիլմեր, աուդիո և տեսաձայնագրությունների օգտագործման համար.
- համակարգչային ծրագրերի, վկայագրի, ապրանքային նշանի, գծագրի, մոդելի, սխեմայի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի օգտագործման համար.
- արդյունաբերական, առևտրային, գիտական տեղեկատվության կամ փորձի օգտագործման համար:

6. ՏՈԿՈՍ

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 1.2.6 տողում, եթե եկամուտը ստացվել է հարկային գործակալից:

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 3.9 տողում, եթե եկամուտը ստացվել է հարկային գործակալ չհանդիսացողից (այդ թվում՝ եկամտային հարկի հաշվարկման (վճարման) պարտավորությունից ազատված հարկային գործակալից):

Տոկոս է համարվում այլ անձին վերադարձելիության սկզբունքով տրամադրված (այդ թվում՝ վճարային արժեթուղթ ձեռք բերելու դիմաց՝ որպես փոխառություն, որպես կանխավճար, սպասարկող բանկի բանկային հաշվին հաշվեգրված) դրամական միջոցների օգտագործման կամ իրացման գնի տարաժամկետ վճարման դիմաց ստացված կամ ստացման ենթակա եկամուտը: Տոկոս կարող է ստացվել, մասնավորապես՝

- ֆիզիկական անձի կողմից տրամադրված փոխառության դիմաց.
- բանկային ավանդի (դեպոզիտի) դիմաց.
- պարտատոմսի և մուրհակի տիրապետման դիմաց:

Տոկոս չի համարվում կետանցված վճարման համար օրենքով կամ գործարքով պարտավորեցված տույժը՝ ներառյալ բանկային տոկոսը:

ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 2.24 տողում:

Տոկոսը համարվում է նվազեցվող եկամուտ և եկամտային հարկով հարկման ենթակա չէ, եթե ստացվում է՝

- գանձապետական պարտատոմսերից, պետական այլ արժեթղթերից.
- ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված պարտատոմսերից կամ ներդրումը վկայող այլ արժեթղթերից, բացառությամբ բանկերի թողարկած այն պարտատոմսերից, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է 2 տարուց:

7. ՎԱՐՁԱՎՃԱՐ

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 1.2.7 տողում, եթե եկամուտը ստացվել է հարկային գործակալից:

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 3.10 տողում, եթե եկամուտը ստացվել է հարկային գործակալ չհանդիսացողից, (այդ թվում՝ եկամտային հարկի հաշվարկման (վճարման) պարտավորությունից ազատված հարկային գործակալից):

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 3.11 տողում՝ վարձավճարի 60.0 մլն. դրամը գերազանցող գումարի չափով:

Վարձակալական վճար է համարվում այլ անձի կողմից գույքի օգտագործման դիմաց ստացված կամ ստացման ենթակա եկամուտը: Վարձակալական վճար է համարվում նաև ենթավարձակալի կողմից վճարվող հատուցումը վարձակալին.

Վարձակալության կարող են հանձնվել հողամասեր և մեկուսի բնական այլ օբյեկտներ, շենքեր, շինություններ, սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ և այլ գույք, որոնք օգտագործման ընթացքում չեն կորցնում իրենց բնական հատկությունները (չսպառվող գույք):

ՕՐԻՆԱԿ 1

ՀՀ ռեզիդենտ Անին իրեն պատկանող բնակարանը հաշվետու տարվա հուլիսի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը վարձակալության է հանձնել այլ ֆիզիկական անձի: Ըստ վարձակալության պայմանագրի՝ բնակարանի վարձակալական վճարը ամսական կազմում է 300,0 հազ. դրամ և հաշվետու տարվա համար Անին ստացել է 1.5 մլն.դրամ (300,0 x 5 ամիս):

Տվյալ դեպքում, հաշվետու տարվա համար հարկային մարմին ներկայացվող Հաշվարկում (Հայտարարագրում) վարձակալական վճարն Անիի կողմից լրացվում է հետևյալ կերպ՝

ՀԱՇՎԱՐԿ (ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ)

ԲԱԺԻՆ 3. ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ (ՍՏԱՑՎԱԾ) ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿ

Եկամտի տեսակ		Եկամուտ (դրամ) 3.1	Դրույքաչափ 3.2	Եկամտային հարկ (դրամ) 3.3
7) վարձավճար	3.10	1500000	10%	150000

ՕՐԻՆԱԿ 2

ՀՀ ռեզիդենտ Անին 2023թ.-ին վարձակալության է հանձնել այլ ֆիզիկական անձանց 2 բնակարան, որոնցից մեկի մասով ստացել է 45,0 մլն.դրամ վարձավճար, իսկ երկրորդի մասով՝ 20,0 մլն.դրամ, հետևաբար՝ հաշվետու տարվա ընթացքում վարձավճարների հանրագումարը կազմում է 65,0 մլն.դրամ (45 + 20):

Քանի որ, տվյալ հաշվետու տարվա համար վարձակալական վճարների հանգրագումարը գերազանցում է 60,0 մլն.դրամը, ուստի Անին՝ 5,0 մլն.դրամի մասով (65 - 60) պետք է հաշվարկի լրացուցիչ եկամտային հարկ:

Տվյալ դեպքում, հարկային մարմին ներկայացվող Հաշվարկում (Հայտարարագրում) վարձակալական վճարները լրացվում են հետևյալ կերպ՝

ՀԱՇՎԱՐԿ (ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ)

ԲԱԺԻՆ 3. ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ (ՍՏԱՑՎԱԾ) ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿ

Եկամտի տեսակ		Եկամուտ (դրամ) 3.1	Դրույքաչափ 3.2	Եկամտային հարկ (դրամ) 3.3
7) վարձավճար	3.10	65.000.000	10%	6.500.000
8) վարձավճարի 60 մլն. դրամը գերազնացող գումար	3.11	5.000.000*	10%	500.000

*5000000 = (65000000-60000000)

ՕՐԻՆԱԿ 3

ՀՀ ռեզիդենտ Անին իրեն պատկանող շինությունը հաշվետու տարվա հունվարի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը վարձակալության է հանձնել ՀՀ ռեզիդենտ «X» ՍՊԸ-ին (հարկային գործակալին):

Ըստ վարձակալության պայմանագրի՝ վարձակալական վճարը ամսեկան կազմում է 7,0 մլն.դրամ, հետևաբար՝ հաշվետու տարվա համար Անիին վճարվել է 70,0 մլն.դրամ (7,0 x 10 ամիս): Ընդ որում, «X» ՍՊԸ-ն Անիին վճարված վարձավճարից հաշվարկել (պետական բյուջե է վճարել) եկամտային հարկ, որը արտացոլվել է ՍՊԸ-ի կողմից ներկայացվող եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկներում:

Քանի որ, տվյալ հաշվետու տարվա համար վարձակալական վճարի հանգրագումարը գերազանցում է 60,0 մլն. դրամը, հետևաբար՝10,0 մլն. դրամի մասով (70 - 60) Անին պետք է հաշվարկի (պետական բյուջե վճարի) լրացուցիչ եկամտային հարկ:

Տվյալ դեպքում, հարկային մարմին ներկայացվող Հաշվարկում (Հայտարարագրում) վարձակալական վճարները լրացվում են հետևյալ կերպ՝

ՀԱՇՎԱՐԿ (ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ)

ԲԱԺԻՆ 1. ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼԻՑ ՍՏԱՑՎՈՂ (ՍՏԱՑՎԱԾ) ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱԶԱՏՎԱԾ ԳՈՐԾԱՏՈՒԻՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ (ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ) ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍՏԱՑՎՈՂ (ՍՏԱՑՎԱԾ) ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, ԱՅԴ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ

ԳԼՈՒԽ 2. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ

Եկամտի տեսակ		Հարկային գործակալի*		Ստացված եկամուտ (դրամ)	Եկամտային հարկ (դրամ)
		ՀՎՀՀ	Անվանում		
3. Վարձավճար	1.2.7	00000000	«X» ՍՊԸ	70.000.000*	7.000.000*

*Լրացվում է անձնավորված հաշվառման տեղեկատվական համակարգի կողմից՝ ինքնաշխատ

Բաժին 3. Հարկային գործակալ չհանդիսացողներից ստացվող (ստացված) եկամուտներից եկամտային հարկի հաշվարկ

Եկամտի տեսակ		Եկամուտ (դրամ) 3.1	Դրույքաչափ 3.2	Եկամտային հարկ (դրամ) 3.3
8) վարձավճարի 60 մլն. դրամը գերազնացող գումար	3.11	10.000.000*	10%	1.000.000

*10000000 = (70.000.000 - 60.000.000)

8. ԾԱՀԱԲԱԺԻՆ

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 1.2.8 տողում, եթե եկամուտը ստացվել է հարկային գործակալից:

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 3.12 տողում, եթե եկամուտը ստացվել է հարկային գործակալ չհանդիսացողից

Շահաբաժին է համարվում կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կամ փայահավաք կապիտալում մասնակցությունից (բաժնետոմսից, բաժնեմասից, փայաբաժնից) կամ համատեղ գործունեությունից որպես շահույթի բաշխում (այդ թվում՝ միջանկյալ բաշխում) մասնակցի ստացած կամ ստացման ենթակա եկամուտը:

ՆՎԱՋԵՑՈՂ ԵԿԱՄՈՒՏ

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 2.24 տողում:

Շահաբաժինը համարվում է նվազեցվող եկամուտ և եկամտային հարկով հարկման ենթակա չէ, եթե ստացվում է ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից:

ՕՐԻՆԱԿ

ՀՀ ռեզիդենտ Տիգրանը հանդիսանում է ռեզիդենտ «Ա» ՍՊԸ-ի միակ մասնակից (սեփականատեր), ինչպես նաև ոչ ռեզիդենտ «Z» կազմակերպության բաժնետեր:

2023թ.-ի ֆինանսական արդյունքների հիման վրա, վերը նշված իրավաբանական անձինք Տիգրանին 2024թ.-ի ընթացքում վճարել են շահաբաժիններ, համապատասխանաբար՝

- «Ա» ՍՊԸ-ի կողմից՝ 2,0 մլն դրամ,

- ոչ ռեզիդենտ «Z» կազմակերպության կողմից 1000 EU (430,0 հազ.դրամ՝ ՀՀ ԿԲ հրապարակած արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից ելնելով):

Տվյալ դեպքում, Տիգրանի կողմից 2024թ.-ի համար, հարկային մարմին ներկայացվող Հաշվարկում (Հայտարարագրում) շահաբաժինները լրացվում են հետևյալ կերպ՝

ՀԱՇՎԱՐԿ (ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ)

ԲԱԺԻՆ 1. ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼԻՑ ՍՏԱՑՎՈՂ (ՍՏԱՑՎԱԾ) ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱԶԱՏՎԱԾ ԳՈՐԾԱՏՈՒԻՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ (ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ) ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍՏԱՑՎՈՂ (ՍՏԱՑՎԱԾ) ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, ԱՅԴ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ

ԳԼՈՒԽ 2. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ

Եկամտի տեսակ		Հարկային գործակալի*		Ստացված եկամուտ (դրամ)	Եկամտային հարկ (դրամ)
		ՀՎՀՀ	Անվանում		
4. Շահաբաժին	1.2.8	00000000	«Ա» ՍՊԸ	2.000.000*	100.000*

*Լրացվում է անձնավորված հաշվառման տեղեկատվական համակարգի կողմից՝ ինքնաշխատ

Բաժին 3. Հարկային գործակալ չհանդիսացողներից ստացվող (ստացված) եկամուտներից եկամտային հարկի հաշվարկ

Եկամտի տեսակ		Եկամուտ (դրամ) 3.1	Դրույքաչափ 3.2	Եկամտային հարկ (դրամ) 3.3
9) շահաբաժին	3.12	430.000	5%	21500
			10%	

9. ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 1.2.9 տողում, եթե եկամուտը ստացվել է հարկային գործակալից:

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 3.17 տողում, եթե եկամուտը ստացվել է հարկային գործակալ չհանդիսացողից (այդ թվում՝ եկամտային հարկի հաշվարկման (վճարման) պարտավորությունից ազատված հարկային գործակալից):

Նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք կամ իրեն, կամ երրորդ անձին ուղղված գույքային իրավունք (պահանջ), կամ ազատում է, կամ պարտավորվում է նրան ազատել իր կամ երրորդ անձի հանդեպ ունեցած գույքային պարտավորությունից:

Գույքի կամ իրավունքի հանդիպական հանձնման կամ հանդիպական պարտավորության առկայության դեպքում պայմանագիրը նվիրատվություն չի համարվում:

Նվիրատվության կարգով ստացված եկամուտ է համարվում, մասնավորապես՝

- նվիրատվության կարգով ստացված անշարժ գույքը
- նվիրատվության կարգով ստացված շարժական գույքը
- նվիրատվության կարգով ստացված պարտատոմսերը, չեկերը, մուրհակները, բաժնետոմսերը, բանկային վկայագրերը, երկակի պահեստային վկայագիր և այլ արժեթղթերը
- նվիրատվության կարգով ստացված դրամական միջոցները

ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 2.10 տողում:

2.10 տողը կարող է չլրացվել, եթե ստորև նշված դեպքերում, **ընտանիքի անդամ չհանդիսացող** ֆիզիկական անձանցից հաշվետու տարվա ընթացքում միանվագ ստացված եկամուտները չեն գերազանցել 1 մլն. դրամը: 1 մլն. դրամը գերազանցելու դեպքում լրացվում է ստացված ամբողջ գումարը:

Ընտանիքի անդամներ հանդիսացող ֆիզիկական անձանցից հաշվետու տարվա ընթացքում ստացված եկամուտները, անկախ գումարային մեծությունից, ընդհանրապես չեն լրացվում:

Նվիրատվությունը համարվում է նվազեցվող եկամուտ, եթե ֆիզիկական անձը մեկ այլ ֆիզիկական անձից ստանում է.

- անշարժ կամ շարժական գույք,
- դրամական միջոցներ,
- պարտատոմսեր, չեկեր, մուրհակներ, բաժնետոմսեր, բանկային վկայագրեր, երկակի պահեստային վկայագիր և այլ արժեթղթեր,

Բացառություն է կազմում՝

ՀԱՐԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 1.2.9 տողում:

Բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի կառուցապատող համարվող ֆիզիկական անձի կողմից մեկ այլ ֆիզիկական անձին շենքի, դրա բնակարանների, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների նվիրատվությունը:

ՕՐԻՆԱԿ 1

ՀՀ ռեզիդենտ Անին 2025թ.-ին նվեր է ստացել Տիգրանից բնակարան, որի արժեքը կազմում է 50,0 մլն դրամ: Տիգրանը չի հանդիսանում կառուցապատող, և նվիրատվությամբ փոխանցվող գույքը համարվում է երկրորդային շուկայի անշարժ գույք:

Ընդ որում, Տիգրանն Անիի ընտանիքի անդամ չէ:

Քանի որ ֆիզիկական անձի մեկ այլ ֆիզիկական անձից նվիրատվությամբ անշարժ գույքի տեսքով ստացված եկամուտը հանդիսանում է նվազեցվող եկամուտ (ենթակա չէ հարկման), հետևաբար՝ Անիի կողմից հարկային մարմին ներկայացվող Հաշվարկում (Հայտարարագրում), նվիրատվությամբ ստացված գույքը (դրա արժեքը) արտացոլվում է հետևյալ կերպ՝

ՀԱՇՎԱՐԿ (ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ)

ԲԱԺԻՆ 2 ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Նվազեցվող եկամտի տեսակ		Եկամուտ (դրամ)
10. Ժառանգությամբ և (կամ) նվիրատվությամբ ստացվող գույք	2.10	50.000.000*

** Եթե Տիգրանը հանդիսանար Անիի ընտանիքի անդամ, ապա Անիի կողմից հարկային մարմին ներկայացվող Հաշվարկում (Հայտարարագրում), նվիրատվությամբ ստացված այդ գույքը (դրա արժեքը) ընդհանրապես չի լրացվում:*

ՕՐԻՆԱԿ 2

ՀՀ ռեզիդենտ Անին 2025թ.-ին նվեր է ստացել Տիգրանից բազմաբնակարան շենքից բնակարան, որի արժեքը կազմում է 30,0 մլն. դրամ: Ընդ որում, Տիգրանը հանդիսանում է տվյալ բազմաբնակարան շենքի կառուցապատող:

Ընդհանուր առմամբ, ֆիզիկական անձի մեկ այլ ֆիզիկական անձից նվիրատվությամբ ստացած անշարժ գույքի տեսքով եկամուտը հանդիսանում է նվազեցվող եկամուտ (ենթակա չէ հարկման), սակայն, բացառություն է կազմում այն դեպքը, երբ նվիրատուն հանդիսանում բազմաբնակարան շենքի կառուցապատողը:

Հետևաբար, տվյալ բնակարանի նվիրատվության գործարքը ենթակա է եկամտային հարկով հարկման և քանի որ ֆիզիկական անձ Տիգրանը (նվիրատու) չի հանդիսանում հարկային գործակալ, ուստի եկամտային հարկի հաշվարկման և վճարման պարտավորությունը (20% դրույքաչափով) պետք է կատարի Անին՝ ինքնուրույն:

2025թ.-ի հարմար, հարկային մարմին ներկայացվող Հաշվարկում (Հայտարարագրում) նվեր ստացած բնակարանի արժեքը և դրա մասով հաշվարկվող հարկը լրացվում են հետևյալ կերպ՝

ՀԱՇՎԱՐԿ (ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ)

ԲԱԺԻՆ 3. ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ (ՍՏԱՑՎԱԾ) ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿ

Եկամտի տեսակ		Եկամուտ (դրամ) 3.1	Դրույքաչափ 3.2	Եկամտային հարկ (դրամ) 3.3
14) նվիրատվություն	3.17	30.000.000	20%	6.000.000

10. ԳՈՒՅՔԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՇԵՆՔԻ, ԴՐԱ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՅԼ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ) ՕՏԱՐՈՒՄԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 1.2.10 տողում, եթե եկամուտը ստացվել է հարկային գործակալից:

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 3.13 տողում, եթե եկամուտը ստացվել է հարկային գործակալ չհանդիսացողից, *(այդ թվում՝ եկամտային հարկի հաշվարկման (վճարման) պարտավորությունից ազատված հարկային գործակալից):*

Ֆիզիկական անձի անձնական գույք է համարվում սեփականության իրավունքով ֆիզիկական անձին պատկանող, սպառողական նպատակներով օգտագործման ենթակա անձնական, ընտանեկան կամ տնային օգտագործման գույքը:

Գույքի օտարում է համարվում՝ ֆիզիկական անձին սեփականության իրավունքով պատկանող ցանկացած գույքի (ապրանքի), գույքային իրավունքի և անձնական ոչ գույքային իրավունքի իրացման (մատակարարման) գործարքը, որի արդյունքում դրանց նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցում է այլ անձին՝ որևէ ձևով կատարվող հատուցմամբ (այդ թվում՝ մասնակի):

ՆՎԱՋԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 2.12 տողում:

2.12 տողը կարող է չլրացվել, եթե **ընտանիքի անդամ չհանդիսացող** ֆիզիկական անձանցից հաշվետու տարվա ընթացքում միանվագ ստացված եկամուտները չեն գերազանցել 1 մլն. դրամը: 1 մլն. դրամը գերազանցելու դեպքում լրացվում է ստացված ամբողջ գումարը:

Բացառություն է կազմում հողամասի (հողամասի նպատակային նշանակությունն էական չէ) օտարումից ստացվող եկամուտները, որոնք ենթակա են լրացման՝ անկախ ստացված գումարի չափից:

Ընտանիքի անդամներ հանդիսացող ֆիզիկական անձանցից հաշվետու տարվա ընթացքում ստացված եկամուտները, անկախ գումարային մեծությունից, ընդհանրապես չեն լրացվում:

- Գույքի (անշարժ և շարժական) օտարումից ստացված եկամուտը համարվում է նվազեցվող, եթե ֆիզիկական անձին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի օտարումից եկամուտը ստացվում է մեկ այլ ֆիզիկական անձից, որը չի հանդիսանում անհատ ձեռնարկատեր կամ նոտար:
- Անշարժ գույքի օտարումից ստացված եկամուտը համարվում է նվազեցվող, եթե ֆիզիկական անձն այդ եկամուտը ստանում է՝ պետության կամ համայնքների կարիքների համար «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրեն պատկանող անշարժ գույքը վերցնելու դիմաց: Ընդ որում, վերը նշվածը վերաբերում է նաև այն ֆիզիկական անձանց, որոնք այդ անշարժ գույքում հաշվառված (գրանցված) են:
- Ֆիզիկական անձի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող հողամասի (անկախ հողամասի նպատակային նշանակությունից) օտարումից ստացված եկամուտը համարվում է նվազեցվող եկամուտ:
- Հարկային գործակալին օտարվող ոսկու և թանկարժեք քարերի դիմաց ֆիզիկական անձի ստացված եկամուտը համարվում է նվազեցվող, եթե այդ հարկային գործակալը իրականացնում է թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի կամ թանկարժեք քարերի առք ու վաճառքի գործունեություն՝ առևտրի իրականացման վայրերում (ոսկու շուկաներում) վաճառասեղանների կամ վաճառակետերի միջոցով:
- Ֆիզիկական անձին սեփականության իրավունքով պատկանող գույքը բանկերին և վարկային կազմակերպություններին օտարելուց ստացվող եկամուտները, եթե հետագայում այդ գույքը նույն բանկի կամ վարկային կազմակերպության կողմից մեկ այլ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի տրամադրվում է լիզինգով (տարատեսակներով):
- Սեփականության իրավունքով ֆիզիկական անձին պատկանող ավտոտրանսպորտային միջոցի (այդ թվում՝ գյուղատնտեսական տեխնիկայի) օտարումից ստացված եկամուտը համարվում է նվազեցվող, եթե այդ եկամուտը ստացվում է ԱԱՀ վճարող համարվող կազմակերպությունից, որն ունի ավտոտրանսպորտային միջոցի ձեռքբերման թրեյդ-ին առևտրի իրականացման լիցենզիա, **բացառությամբ՝**

ՀԱՐԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 1.2.10 տողում:

այն դեպքերի, երբ երբ այդ եկամուտները ձևավորվում են այն տրանսպորտային միջոցի (այդ թվում՝ գյուղատնտեսական տեխնիկայի) օտարումից, որը ավտոտրանսպորտային միջոցի (այդ թվում՝ գյուղատնտեսական տեխնիկայի) ձեռքբերման թրեյդ-ին առևտրի իրականացման լիցենզիա ունեցող կազմակերպության կողմից շահագործման նպատակով հետագայում ներկայացվում է պետական հաշվառման:

11. ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՇԵՆՔԻ, ԴՐԱ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՅԼ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ) ՕՏԱՐՈՒՄԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 1.2.11 տողում, եթե եկամուտը ստացվել է հարկային գործակալից:

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 3.14 տողում, եթե եկամուտը ստացվել է հարկային գործակալ չհանդիսացողից *(այդ թվում՝ եկամտային հարկի հաշվարկման (վճարման) պարտավորությունից ազատված հարկային գործակալից):*

Բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի կառուցապատող համարվող (համարված) ֆիզիկական անձի կողմից շենքի, դրա բնակարանների, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց) կամ այլ տարածքների (առանց ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող ոչ բնակելի տարածքների) այլ անձանց օտարումից ստացվող եկամուտները հաշվարկվում են գործարքի փաստացի գնից ելնելով: Այն դեպքում, երբ գործարքի գինը բացակայում է կամ գործարքի գինը պակաս է անշարժ գույքի կադաստրային արժեքի 80%-ից, ապա անշարժ գույքի օտարումից ստացվող եկամուտները հաշվարկվում են կադաստրային արժեքի 80%-ի չափով (Օրենսգրքի 228-րդ հոդված):

Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի գնահատման կարգը սահմանված է 19.11.2019թ.-ի N ՀՕ-225-Ն ՀՀ օրենքով:

12. ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 1.2.10 տողում, եթե եկամուտը ստացվել է հարկային գործակալից:

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 1.2.11 տողում, եթե եկամուտը ստացվել է հարկային գործակալից և գրավ դրված գույք է հանդիսանում կառուցապատող հանդիսացող ֆիզիկական անձի շենքը, շենքի բնակարանը կամ այլ տարածք:

Ֆիզիկական անձի կողմից գրավ դրված գույքը բռնագանձման արդյունքում (այդ թվում՝ հարկադիր կամ սնանկության աճուրդից գնման կամ հանձնման դեպքում) սեփականության իրավունքով գրավառու բանկին կամ վարկային կազմակերպությանը անցնելու դեպքում գրավատու ֆիզիկական անձի՝ գույքն օտարելուց ստացվող եկամուտ է համարվում գրավ դրված գույքի օտարման գնի և վարկային պարտավորության դրական տարբերությունը:

ՉԻ ՀԱՄԱՐՎՈՒՄ ԵԿԱՄՈՒՏ

Վերը նշվածի հետ կապված, անհրաժեշտ է հաշվի առնել, որ եթե բանկի կամ վարկային կազմակերպության սեփականությանն անցած (այդ թվում՝ պարտքի դիմաց ստացված)՝ գրավ դրված գույքը բանկի կամ վարկային կազմակերպության կողմից գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումից հետո՝ 1 տարվա ընթացքում, օտարվում է այդ գույքի նախկին սեփականատիրոջը (որի գույքի վրա տարածվել էր բռնագանձումը) կամ նրա իրավահաջորդին, ապա համարվում է, որ գրավատու ֆիզիկական անձը եկամուտ չի ստացել:

Վարկային պարտավորություն է համարվում գրավ դրված գույքը բանկի կամ վարկային կազմակերպության կողմից գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման օրվա դրությամբ գրավով ապահովված պարտավորությունը (այդ թվում՝ տոկոսները, տուժանքը, կատարման ժամկետի կետանցով պատճառված վնասները), ինչպես նաև գրավ դրված գույքը պահելու, պահպանելու, դրա վրա բռնագանձում տարածելու և օտարելու համար գրավառուի (բանկի կամ վարկային կազմակերպության) կատարած կամ կատարվելիք և գրավ դրված գույքի օտարման գնի 15%-ը չգերազանցող ծախսերը:

Արտադատական կարգով բռնագանձման արդյունքում բանկի կամ վարկային կազմակերպության սեփականությանն անցած՝ գրավ դրված գույքի օտարումից ֆիզիկական անձին եկամուտների վճարման օր և օտարման գին են համարվում՝

- բանկի կամ վարկային կազմակերպության կողմից այդ գույքի հետագա օտարման օրը և օտարման գինը, եթե այդ օտարումը տեղի է ունեցել գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումից հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Ընդ որում, եթե գույքն օտարվել է օտարման օրվա դրությամբ այդ գույքի շուկայական գնից ողջամիտ չհամարվող ցածր գնով, ապա գույքի օտարման գին է համարվում օտարման օրվա դրությամբ այդ գույքի շուկայական գինը.

- գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման օրվան հաջորդող մեկ տարվա ժամկետի վերջին օրը և այդ օրվա դրությամբ գույքի շուկայական գինը, եթե այդ մեկ տարվա ժամկետում գույքը չի օտարվել:

Ընդ որում, բանկը կամ վարկային կազմակերպությունը պարտավոր է իր հաշվին ապահովել գույքի շուկայական գնի որոշումը անկախ գնահատողի կողմից:

Բանկը կամ վարկային կազմակերպությունը և գրավատու ֆիզիկական անձը կարող են գրավոր համաձայնություն կնքել, որ գրավ դրված գույքի օտարման արդյունքում ֆիզիկական անձին եկամուտների վճարման օր և օտարման գին համարվեն բանկի կամ վարկային կազմակերպության կողմից գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման օրը և այդ օրվա դրությամբ անկախ գնահատողի որոշած շուկայական գինը:

Բռնագանձված գույքի նախկին սեփականատիրոջ կամ նրա իրավահաջորդի մասնակցությամբ քաղաքացիական, քրեական, սնանկության կամ վարչական գործի շրջանակներում բանկին կամ վարկային կազմակերպությանը սեփականություն անցած գույքի վրա արգելանք դրվելու դեպքում մեկ տարվա ժամկետի ընթացքը կասեցվում է արգելանքի տակ գտնվելու ամբողջ ժամկետով:

13. ՇԱՀՈՒՄ

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 1.2.12 տողում, եթե եկամուտը ստացվել է հարկային գործակալից:

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 3.19 տողում, եթե եկամուտը ստացվել է հարկային գործակալ չհանդիսացողից (այդ թվում՝ եկամտային հարկի հաշվարկման (վճարման) պարտավորությունից ազատված հարկային գործակալից):

Շահում է համարվում գովազդային վիճակախաղերի, խաղարկությունով, ոչ խաղարկությունով և համակցված վիճակախաղերի, ինչպես նաև տոտալիզատորի մասնակիցների դրամական և իրային շահումները կամ խաղատներում, շահումով խաղերում կամ ինտերնետ շահումով խաղերում ստացված շահումները: Ֆիզիկական անձի հարկվող եկամուտ է համարվում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով իրականացվող՝ գովազդային վիճակախաղերի մասնակիցների դրամական և իրային շահումները՝ յուրաքանչյուր շահման դեպքում **50,0 հազ. դրամը գերազանցող** չափով:

ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 2.16 տողում:

2.16 տողում՝ ստորև ներկայացված եկամուտները կարող են չլրացվել

→ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով իրականացվող՝ գովազդային վիճակախաղերի մասնակիցների դրամական և իրային շահումները համարվում են նվազեցվող եկամուտ՝ յուրաքանչյուր շահման դեպքում **50,0 հազ. դրամը չգերազանցող** չափով:

→ Դրամական կամ իրային շահումը համարվում է նվազեցվող եկամուտ, եթե ֆիզիկական անձը շահումը ստանում է՝

- խաղարկությունով, ոչ խաղարկությունով և համակցված վիճակախաղերով.
- տոտալիզատորով, խաղատներում, շահումով խաղերում կամ ինտերնետ շահումով խաղերում:

ՕՐԻՆԱԿ 1

ՀՀ ռեզիդենետ Անին 2025թ.-ի ընթացքում մասնակցել է «Ա» ՍՊԸ-ի կողմից կազմակերպված գովազդային վիճակախաղին և շահել 80,0 հազ.դրամ:

Քանի որ շահումը գերազանցում է 50,0 հազ.դրամը (նվազեցվող եկամուտ), ուստի 30,0 հազ.դրամը (80-50) «Ա» ՍՊԸ-ի կողմից՝ որպես հարկային գործակալ, ենթակա է հարկման:

Տվյալ դեպքում, Անիի կողմից 2025թ.-ի համար հարկային մարմին ներկայացվող Հաշվարկում (Հայտարարագրում) 30,0 հազ.դրամի չափով շահումը լրացվում է հետևյալ կերպ՝

ՀԱՇՎԱՐԿ (ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ)

ԲԱԺԻՆ 1. ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼԻՑ ՍՏԱՑՎՈՂ (ՍՏԱՑՎԱԾ) ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱԶԱՏՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ (ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ) ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍՏԱՑՎՈՂ (ՍՏԱՑՎԱԾ) ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, ԱՅԴ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ

ԳԼՈՒԽ 2. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ

Եկամտի տեսակ		Հարկային գործակալի*		Ստացված եկամուտ (դրամ)	Եկամտային հարկ (դրամ)
		ՀՎՀՀ	Անվանում		
8. Շահում	1.2.12	00000000	«Ա» ՍՊԸ	30.000*	6.000*

*Լրացվում է անձնավորված հաշվառման տեղեկատվական համակարգի կողմից՝ ինքնաշխատ

Ինչ վերաբերում է 50,0 հազ.դրամին, ապա վերջինս դասվում է այն նվազեցվող եկամուտների թվին, որոնք Հաշվարկում (Հայտարարագրում) չեն լրացվում:

Այնուամենայնիվ, եթե Անին ցանկանում է 50,0 հազ.դրամը հայտարարագրել, ապա 2025թ.-ի համար հարկային մարմին ներկայացվող Հաշվարկում (Հայտարարագրում) այն լրացվում է հետևյալ կերպ՝

ԲԱԺԻՆ 2 ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Նվազեցվող եկամտի տեսակ		Եկամուտ (դրամ)
16. Շահումները	2.16	50.000

ՕՐԻՆԱԿ 2

ՀՀ ռեզիդենետ Տիգրանը 2025թ.-ի ընթացքում մասնակցել է «Ա» ՍՊԸ-ի կողմից կազմակերպված գովազդային վիճակախաղին և շահել արդուկ, որի արժեքը կազմում է 45,0 հազ.դրամ:

Եթե իրային շահումի արժեքը չի գերազանցում 50,0 հազ.դրամը, ապա վերջինս դասվում է այն նվազեցվող եկամուտների թվին, որոնք որոնք Հաշվարկում (Հայտարարագրում) չեն լրացվում:

Այնուամենայնիվ, եթե Տիգրանը ցանկանում է 45,0 հազ.դրամի չափով շահումը հայտարարագրել, ապա 2025թ.-ի համար հարկային մարմին ներկայացվող Հաշվարկում (Հայտարարագրում) այն լրացվում է հետևյալ կերպ՝

ՀԱՇՎԱՐԿ (ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ)

ԲԱԺԻՆ 2 ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Նվազեցվող եկամտի տեսակ		Եկամուտ (դրամ)
16. Շահումները	2.16	45.000

14. ՄՐՑԱՆԱԿ

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 1.2.13 տողում, եթե եկամուտը ստացվել է հարկային գործակալից:

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 3.16 տողում, եթե եկամուտը ստացվել է հարկային գործակալ չհանդիսացողից (այդ թվում՝ եկամտային հարկի հաշվարկման (վճարման) պարտավորությունից ազատված հարկային գործակալից):

Մրցանակ է համարվում մրցույթներից իրային և դրամական մրցանակը:

Ֆիզիկական անձի հարկվող եկամուտ է համարվում մրցույթներում ստացվող դրամական և իրային մրցանակների արժեքը՝ յուրաքանչյուր մրցանակի դեպքում **50,0 հազ. դրամը գերազանցող** չափով:

ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 2.17 տողում:

2.17 տողում՝ ստորև ներկայացված եկամուտները կարող են չլրացվել

Մրցույթներում ստացվող դրամական և իրային մրցանակների արժեքը համարվում է նվազեցվող եկամուտ՝ յուրաքանչյուր մրցանակի դեպքում **50,0 հազ. դրամը չգերազանցող** չափով, ինչպես նաև ՀՀ ազգային հավաքականի կազմում միջազգային մրցույթներում հաղթած մարզիկների և մարզիչների մրցանակները:

ՕՐԻՆԱԿ 1

Հարկային գործակալ հանդիսացող «Մրցույթ» ՍՊԸ-ն 2025թ.-ին կազմակերպել է խելացիների և հնարամիտների մրցույթ, ինչի արդյունքում հաղթող է ճանաչվել ֆիզիկական անձ Անին (ՀՀ ռեզիդենետ) և սպացել համակարգիչ, որի արժեքը կազմում է 250,0 հազ.դրամ:

Քանի որ «Մրցույթ» ՍՊԸ-ն, որպես հարկային գործակալ, ֆիզիկական անձին մրցույթում սպացվող իրային մրցանակի մասով ազատված է հարկի հաշվարկման և պետական բյուջե վճարման պարտավորությունից, հետևաբար՝ հարկի վճարման պարտավորությունը պետք է կրի մրցանակ սպացող ֆիզիկական անձն ինքնուրույն:

Քանի որ իրային մրցանակի արժեքը գերազանցում է 50,0 հազ.դրամը (նվազեցվող եկամուտ), ուստի 200,0 հազ.դրամի (250-50) մասով Անին, ինքնուրույն պետք է հաշվարկի և բյուջե վճարի եկամտային հարկը:

Տվյալ դեպքում, 2025թ.-ի համար, հարկային մարմին ներկայացվող Հաշվարկում (Հայտարարագրում) Անին իր մրցանակը (մրցանակի արժեքը) լրացնում է հետևյալ կերպ՝

ՀԱՇՎԱՐԿ (ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ)

ԲԱԺԻՆ 3. ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ (ՍՏԱՑՎԱԾ) ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿ

Եկամտի տեսակ		Եկամուտ (դրամ) 3.1	Դրույքաչափ 3.2	Եկամտային հարկ (դրամ) 3.3
13) մրցանակ	3.16	200.000	20%	40.000

Ինչ վերաբերում է 50,0 հազ.դրամին, ապա վերջինս դասվում է այն նվազեցվող եկամուտների թվին, որոնք Հաշվարկում (Հայտարարագրում) չեն լրացվում:

Այնուամենայնիվ, եթե Անին ցանկանում է 50,0 հազ.դրամը հայտարարագրել, ապա 2025թ.-ի համար հարկային մարմին ներկայացվող Հաշվարկում (Հայտարարագրում) այն լրացվում է հետևյալ կերպ՝

ԲԱԺԻՆ 2 ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Նվազեցվող եկամտի տեսակ		Եկամուտ (դրամ)
17. Մրցանակներ	2.17	50.000

ՕՐԻՆԱԿ 2

Հարկային գործակալ հանդիսացող «Մրցույթ» ՍՊԸ-ն 2025թ.-ին կազմակերպել է խելացիների և հնարամիտների մրցույթ, ինչի արդյունքում հաղթող է ճանաչվել ֆիզիկական անձ Տիգրանը (ՀՀ ռեզիդենետը) և ստացել գումարային մրցանակ 220,0 հազ.դրամի չափով:

Քանի որ գումարային մրցանակի չափը գերազանցում է 50,0 հազ.դրամը (նվազեցվող եկամուտը), ուստի 170,0 հազ.դրամը (220-50) ենթակա է հարկման «Մրցույթ» ՍՊԸ-ի կողմից, որպես հարկային գործակալ:

Տվյալ դեպքում, 2025թ.-ի համար, Տիգրանի կողմից հարկային մարմին ներկայացվող Հաշվարկում (Հայտարարագրում) գումարային մրցանակը արտացոլվում է հետևյալ կերպ՝

ՀԱՇՎԱՐԿ (ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ)

ԲԱԺԻՆ 1. ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼԻՑ ՍՏԱՑՎՈՂ (ՍՏԱՑՎԱԾ) ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱԶԱՏՎԱԾ ԳՈՐԾԱՏՈՒԻՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ (ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ) ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍՏԱՑՎՈՂ (ՍՏԱՑՎԱԾ) ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, ԱՅԴ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ

ԳԼՈՒԽ 2. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ

Եկամտի տեսակ		Հարկային գործակալի*		Ստացված եկամուտ (դրամ)	Եկամտային հարկ (դրամ)
		ՀՎՀՀ	Անվանում		
9. Մրցանակ	1.2.13	00000000	«Մրցույթ» ՍՊԸ	170.000*	34.000*

*Լրացվում է անձնավորված հաշվառման տեղեկատվական համակարգի կողմից՝ ինքնաշխատ

Ինչ վերաբերում է 50,0 հազ.դրամին, ապա վերջինս դասվում է այն նվազեցվող եկամուտների թվին, որոնք Հաշվարկում (Հայտարարագրում) չեն լրացվում:

Այնուամենայնիվ, եթե Անին ցանկանում է 50,0 հազ.դրամը հայտարարագրել, ապա 2025թ.-ի համար հարկային մարմին ներկայացվող Հաշվարկում (Հայտարարագրում) այն լրացվում է հետևյալ կերպ՝

ԲԱԺԻՆ 2 ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Նվազեցվող եկամտի տեսակ		Եկամուտ (դրամ)
17. Մրցանակներ	2.17	50.000

15. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 1.2.14 տողում, եթե եկամուտը ստացվել է հարկային գործակալից:

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 3.19 տողում, եթե եկամուտը ստացվել է հարկային գործակալ չհանդիսացողից *(այդ թվում՝ եկամտային հարկի հաշվարկման (վճարման) պարտավորությունից ազատված հարկային գործակալից):*

Ապահովագրավճար է համարվում ապահովագրության պայմանագրով սահմանված չափով և պայմաններով ապահովադրի կողմից ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումարը:

Հարկվող եկամուտ է համարվում գործատուի կողմից իր վարձու աշխատողի առողջության ապահովագրության համար կատարվող ապահովագրավճարը՝ աշխատողի համար յուրաքանչյուր ամսվա հաշվով 10,0 հազար դրամը գերազանցող գումարի չափով:

ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 2.26 տողում:

2.26 տողում՝ ստորև ներկայացված եկամուտը կարող է չլրացվել

Գործատուի կողմից իր վարձու աշխատողի առողջության ապահովագրության համար կատարվող ապահովագրավճարը համարվում է նվազեցվող եկամուտ՝

յուրաքանչյուր վարձու աշխատողի համար եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա հաշվով մինչև 10,0 հազ. դրամի չափով:

Հարկվող եկամուտ է համարվում նաև հարկային գործակալի, հարկային գործակալ չհանդիսացողի (բացառությամբ՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց) կողմից ֆիզիկական անձի համար ցանկացած այլ դեպքի համար կատարվող ապահովագրավճարը՝ ամբողջ գումարի չափով:

16. ԿԱՄԱՎՈՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 1.2.15 տողում, եթե եկամուտը ստացվել է հարկային գործակալից:

Հարկվող եկամուտ է համարվում կամավոր կենսաթոշակային բաղադրիչի շրջանակում ֆիզիկական անձի կամ երրորդ անձի (այդ թվում՝ գործատուի) կողմից ֆիզիկական անձի համար կատարվող կամավոր կենսաթոշակային վճարների հաշվին սահմանված կարգով ստացվող կենսաթոշակները:

Կամավոր կենսաթոշակային վճարը կամավոր կենսաթոշակ ստանալու նպատակով մասնակցի կամ այլ անձի կողմից մասնակցի համար (օգտին) կատարվող վճարն է:

17. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝ ՍՅՈՒՆԱԿ 1.2.16

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 1.2.16 տողում, եթե եկամուտը ստացվել է հարկային գործակալից:

Ֆիզիկական անձի հարկվող եկամուտներ են համարվում սույն փաստաթղթի **1-16-րդ կետերում չնշված** այլ եկամուտները:

Այլ եկամուտների թվին են դասվում նաև՝

- կամավոր աշխատողի փոխհատուցումը,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ կամավոր կենսաթոշակային բաղադրիչի շրջանակներում ֆիզիկական անձի կամ երրորդ անձի (այդ թվում՝ գործատուի) կողմից ֆիզիկական անձի համար կատարվող կամավոր կենսաթոշակային վճարների հաշվին սահմանված կարգով ստացվող հատուցումների, որոնք համարվում են հարկվող եկամուտ, սյունակ
- աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց դատարանի վճռի հիման վրա գործատուի կողմից վճարվող հատուցումների գումարները՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով՝ որպես բաց թողնված եկամտի փոխհատուցման գումարներ:

18. 12 ԱՄՍՅԱ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՉՎՃԱՐՎԱԾ ՊԱՍԻՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 1.2.16 տողում, եթե եկամուտը ստացվել է հարկային գործակալից:

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 3.18 տողում, եթե եկամուտը ստացվել է հարկային գործակալ չհանդիսացողից (այդ թվում՝ եկամտային հարկի հաշվարկման (վճարման) պարտավորությունից ազատված հարկային գործակալից):

Ֆիզիկական անձի հարկվող եկամուտներ են համարվում՝

- ֆիզիկական անձին հարկային գործակալի կողմից վճարվող պասիվ եկամուտները, եթե դրանց ստացման իրավունքը ձեռք բերելու հարկային տարվան հաջորդող 12 ամիսների ընթացքում այդ եկամուտները չեն վճարվել, բացառությամբ բանկային ավանդի և հրապարակային առաջարկի միջոցով հանրությանն առաջարկված կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտքային արժեթղթերի դիմաց վճարվող տոկոսները,

→ Ֆիզիկական անձի հարկային գործակալ չհանդիսացող անձից ստացվող պասիվ եկամուտները, եթե դրանց ստացման իրավունքը ձեռք բերելու հարկային տարվան հաջորդող 12 ամիսների ընթացքում այդ եկամուտները չեն ստացվել:

Պասիվ եկամուտների թվին են դասվում շահաբաժինը, տոկոսը, ռոյալթին և վարձակալական վճարը:

19. ՆՊԱՍՏՆԵՐ (ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ)

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 2.1 տողում

ՀՀ օրենսդրության համաձայն Ֆիզիկական անձանց կողմից ստացվող նպաստների գումարները համարվում են նվազեցվող եկամուտ, **բացառությամբ՝**

ՀԱՐԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ՝ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ, ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ (տես 3-րդ կետը)

Նվազեցվող եկամուտ համարվող նպաստներն են «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով սահմանված՝

→ ընտանեկան և սոցիալական նպաստները.

→ հրատապ օգնությունը.

→ երեխայի ծննդյան միանվագ նպաստը, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստը, մայրության նպաստը.

→ ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նպաստները.

→ թաղման նպաստը.

→ խնամակալության նպաստը:

Նվազեցվող եկամուտ համարվող նպաստ է համարվում նաև վարձու աշխատողին աշխատանքից ազատման դեպքում վճարվող արձակման նպաստը *(ՀՀ աշխատանքային օրենսգիրք, Հոդված 129):*

20. ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ (ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ)՝

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 2.2 տողում

ՀՀ և այլ պետությունների օրենսդրության շրջանակներում ստացվող բոլոր կենսաթոշակները, այդ թվում՝ այլ պետությունների կենսաթոշակային ապահովության համակարգի շրջանակներում ստացվող համանման վճարները համարվում են նվազեցվող եկամուտ, **բացառությամբ՝**

ՀԱՐԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ՝ ԿԱՄԱՎՈՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍՏԱՑՎՈՂ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ (տես 16-րդ կետը)

Նվազեցվող եկամուտներ են համարվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված հետևյալ կենսաթոշակները՝

→ աշխատանքային և սոցիալական կենսաթոշակները: Դրանք են՝ տարիքային, արտոնյալ պայմաններով, երկարամյա ծառայության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում և մասնակի կենսաթոշակները,

→ զինվորական կենսաթոշակները: Դրանք են՝ երկարամյա ծառայության, կերակրողին կորցնելու դեպքում և հաշմանդամության կրթաթոշակները:

Նվազեցվող եկամուտ համարվող կենսաթոշակներն են նաև «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով կուտակային բաղադրիչի շրջանակներում ստացվող կուտակային կենսաթոշակները:

21. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ (ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ)

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 2.3 տողում

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով և այլ պետությունների օրենսդրության համաձայն վճարվող ապահովագրական հատուցումները համարվում են նվազեցվող եկամուտ, **բացառությամբ՝**

ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ՝ ԿԱՄԱՎՈՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿԱՄ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԳՈՐԾԱՏՈՒԻ) ԿՈՂՄԻՑ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎՈՂ ԿԱՄԱՎՈՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՍՏԱՑՎՈՂ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ՀԱՄԱՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՐԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ:

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 1.2.16 տողում

Ապահովագրական հատուցումն է՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում ապահովագրողի կողմից ապահովագրական պայմանագրի հիման վրա ապահովադրին կամ շահառուին վճարման ենթակա գումարը՝ դրամական արտահայտությամբ կամ համարժեք գույքով:

ՕՐԻՆԱԿ

Ֆիզիկական անձ Անիի ավտոմեքենայի մասնակցությամբ, 2025թ.-ի մարտ ամսին տեղի ունեցել պատահար: Անին՝ «Ա» ապահովագրական ընկերության հետ կնքած ԱՊՊԱ պայմանագրի համաձայն, փվյալ տարվա նոյեմբեր ամսվա ընթացքում ընկերությունից ստացել է ավտոմեքենայի վթարի փոխհատուցում՝ 200,0 հազ. դրամի չափով:

Միաժամանակ, ելնելով անհրաժշտությունից, Անին անցել է բժշկական հետազոտություն (գլխուղեղ ի մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիա) և նույն ապահովագրական ընկերությունից՝ արդեն իսկ առողջության ապահովագրության շրջանակներում, 2025թ.-ի ապրիլ ամսին ստացել է հետազոտության արժեքի մասնակի փոխհատուցում՝ 50,0 հազ. դրամի չափով:

Քանի որ, ինչպես ԱՊՊԱ-ի, այնպես էլ առողջության ապահովագրության շրջանակներում Անիի ստացած ապահովագրական հատուցումները հանդիսանում են նվազեցվող եկամուտ (ենթակա չեն հարկման), հետևաբար՝ Անիի կողմից 2025թ.-ի համար հարկային մարմին ներկայացվող Հաշվարկում (Հայտարարագրում), դրանց հանրագումարը 250,0 դրամի չափով (200 + 50) արտացոլվում է հետևյալ կերպ՝

ՀԱՇՎԱՐԿ (ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ)

ԲԱԺԻՆ 2 ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Նվազեցվող եկամտի տեսակ		Եկամուտ (դրամ)
3. Ապահովագրական հատուցումներ	2.3	250.000

22. ԲԱՆԿԵՐԻՑ ԿԱՄ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ՝ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՍՏԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐ (ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ)

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 2.4 տողում

Նվազեցող եկամուտներ են համարվում բանկերի կամ վարկային կազմակերպությունների միջոցով ստացված գումարները, որոնք բանկերը կամ վարկային կազմակերպություններն ստացել են որպես ապահովագրական հատուցում, որոնց մասով բանկերը կամ վարկային կազմակերպությունները հանդիսանում են շահառու՝ այն մասով, որ մասով այդ գումարները, ապահովագրության

պայմանագրի համաձայն, բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվում են վարկառու կամ գրավատու ֆիզիկական անձին կամ ուղղվում են վարկառու ֆիզիկական անձի վարկի մարմանը:

23. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԻՋՈՑՆԵՐ (ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ)

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 2.5 տողում

Նվազեցվող եկամուտներ են համարվում «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված կուտակային կենսաթոշակային բաղադրիչի շրջանակներում ֆիզիկական անձի համար (օգտին) ՀՀ պետական բյուջեից հատկացվող լրացուցիչ միջոցները, որոնց առավելագույն չափը՝ նույն օրենքի համաձայն չի կարող գերազանցել ամսական 25,0 հազ. դրամը և տարեկան՝ 300,0 հազ.դրամը:

24. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ)

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 2.6 տողում

Նվազեցվող եկամուտներ են համարվում ՀՀ օրենսդրության համաձայն՝ սոցիալական պաշտպանության համակարգի շրջանակներում ստացվող պատվովճարները, դրամական օգնություններն ու օժանդակությունները:

Ֆիզիկական անձանց այդպիսի վճարումներ կարող են կատարվել, մասնավորապես՝ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի համաձայն:

Պատվովճար է համարվում դրամական հատկացումը, որը տրվում է որոշ կարգի ծառայություններ կատարած կամ ՀՀ պատվավոր կոչման արժանացած անձանց (մշակութային, զինվորական, գիտության, պետական և այլն գործիչներին):

25. ԱԼԻՄԵՆՏՆԵՐ (ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ)

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 2.7 տողում

ՀՀ օրենսդրության շրջանակներում ստացվող ալիմենտները համարվում են ֆիզիկական անձի նվազեցվող եկամուտ:

Ալիմենտը (ապրուստավճարը)՝ ընտանիքի որոշ անդամների կողմից ընտանիքի մյուս՝ դրա կարիքն ունեցող անդամներին վճարվող գումարն է ***(ՀՀ ընտանեկան օրենսգիրք)***: Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար ալիմենտը վճարվում է երեխաների խնամակալին (հոգաբարձուին):

26. ԴՈՆՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ)

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 2.8 տողում

2.8 տողում՝ ստորև ներկայացված եկամուտները կարող են չլրացվել

Նվազեցվող եկամուտներ են համարվում դոնորությունից ստացվող եկամուտները:

Դոնորային եկամուտ է համարվում, մասնավորապես՝

- մարդու արյան և արյան բաղադրամասերի դոնորությունից ստացվող եկամուտը.
- կրծքի կաթ հանձնելուց ստացվող եկամուտը.
- սեռաբջիջների դոնորությունից ստացվող եկամուտը.

27. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԵՎ ԿԱՄԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐՈՂ ԱՆՁԱՆՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՆԵՐ (ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ)

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 2.9 տողում

2.9 տողում ստորև ներկայացված եկամուտները կարող են չլրացվել:

Նվազեցվող եկամուտներ են համարվում աշխատանքային և կամավոր աշխատանքի մասին պայմանագրերի շրջանակներում աշխատանքների կատարման հետ կապված աշխատողների (կամավորների) ստացված փոխհատուցման վճարները (այդ թվում՝ դիվանագիտական ծառայողների փոխհատուցման վճարները), որոնք չեն գերազանցում ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմաները (չափերը), բացառությամբ

ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՉՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ՀԱՄԱՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՐԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ

Լրացվում է Պարզեցված Հաշվարկի 1.5 սյունակում, եթե եկամուտը ստացվում է եկամտային հարկի հաշվարկման (վճարման) պարտավորությունից ազատված հարկային գործակալից:

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 1.1.5 տողում, եթե եկամուտը ստացվում է հարկային գործակալից:

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 3.19 տողում, եթե եկամուտը ստացվում է հարկային գործակալ չհանդիսացողից:

Մասնավորապես, աշխատողների ստացված փոխհատուցման վճարների թվին են դասվում՝

- գործուղման ծախսերի (օրապահիկ, գիշերավարձ, տրանսպորտային ծախսեր, ժամանակավոր գրանցման հետ կապված ծախսեր և այլ) փոխհատուցման գումարները.
- դաշտային պայմաններում և տեղափոխման (տեղաշարժման) աշխատանքների կատարման դեպքում տրվող հատուցման գումարները.

28. ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՄԲ ԿԱՄ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՍՏԱՑՎՈՂ ԳՈՒՅՔ (ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ)

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 2.10 տողում

2.10 տողը կարող է չլրացվել, եթե ստորև նշված դեպքերում, **ընտանիքի անդամ չհանդիսացող** ֆիզիկական անձանցից հաշվետու տարվա ընթացքում միանվագ ստացված եկամուտները չեն գերազանցել 1 մլն. դրամը: 1 մլն. դրամը գերազանցելու դեպքում լրացվում է ստացված ամբողջ գումարը:

Ընտանիքի անդամներ հանդիսացող ֆիզիկական անձանցից հաշվետու տարվա ընթացքում ստացված եկամուտները, անկախ գումարային մեծությունից, ընդհանրապես չեն լրացվում:

Նվազեցվող եկամուտ է համարվում ժառանգությամբ ստացվող գույքը:

Ժառանգության դեպքում մահացածի գույքը (ժառանգությունը) անփոփոխ վիճակում, որպես միասնական ամբողջություն, անցնում է այլ անձանց (համապարփակ իրավահաջորդություն): Ժառանգության զանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող՝

- դրամական, այդ թվում՝ կուտակային կենսաթոշակային ֆոնդում առկա դրամական միջոցները.
- գանձապետական պարտատոմսերը, պետական այլ արժեթղթերը և Համահայկական բանկի թողարկած պարտատոմսերը.

- կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում մասնակցության (բաժնետոմսի, բաժնեմասի, փայաբաժնի) կամ ներդրում վկայող այլ արժեթղթերը.
- ներդրումային ֆոնդերում մասնակցությունը հավաստող արժեթղթերը.
- այլ գույքային իրավունքները:

Ժառանգությունը կատարվում է ըստ կտակի և ըստ օրենքի: Ժառանգությունը կատարվում է ըստ օրենքի, եթե չկա կտակ, կամ դրանում սահմանված չէ ամբողջ ժառանգության ճակատագիրը:

Նվիրատվությամբ ստացված գույքի հետ կապված տես սույն փաստաթղթի 9-րդ կետը:

29. ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (ՆՎԱՃԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ)

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 2.11 տողում

2.11 տողը կարող է չլրացվել, եթե ստորև նշված դեպքերում հաշվետու տարվա ընթացքում միանվագ ստացված եկամուտները չեն գերազանցել 1 մլն. դրամը: 1 մլն. դրամը գերազանցելու դեպքում լրացվում է ստացված ամբողջ գումարը:

Անհատույց է ճանաչվում այն պայմանագիրը (գործարքը), որով մի կողմը պարտավորվում է որևէ բան տրամադրել մյուս կողմին՝ առանց նրանից վճար կամ այլ հանդիպական կատարում ստանալու: Մասնավորապես, դա վերաբերում է ակտիվների անհատույց տրամադրման, ծառայությունների անհատույց մատուցման և աշխատանքների անհատույց կատարման դեպքերին:

Նվազեցվող եկամուտներ են համարվում ոչ առևտրային կազմակերպություններից, ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, օրենքով ստեղծված մշտապես գործող մարմինների որոշումների հիման վրա, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային, միջպետական (միջկառավարական) կազմակերպություններից անհատույց ստացված ակտիվները, աշխատանքները, ծառայությունները:

Անհատույց եկամուտների թվին են դասվում նաև՝

- վերը նշված մարմինների ու միջազգային, միջպետական (միջկառավարական) կազմակերպությունների կողմից ֆիզիկական անձանց համար (օգտին) կատարված վճարումները, այլ անձանցից անհատույց ստացված եկամուտները, օգնությունները.
- վարձու աշխատողի կամ վարձու աշխատողի ընտանիքի որևէ անդամի մահվան դեպքում միանվագ կարգով ստացվող օգնության գումարները,
- սոցիալական փաթեթում ներառված ծառայություններից օգտվելու կամ փաթեթի հաշվում առկա դրամական միջոցները կանխիկացնելու արդյունքում ֆիզիկական անձանց մոտ առաջացող եկամուտները:

30. ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ (ՆՎԱՃԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ)

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 2.13 տողում

Նվազեցվող եկամուտներ են համարվում բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների, ասպիրանտների, միջնակարգ-մասնագիտական ու պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնական հաստատությունների սովորողների, հոգևոր ուսումնական հաստատությունների ունկնդիրների՝ պետությունից ստացվող կրթաթոշակները, ինչպես նաև այն կրթաթոշակները, որոնք նրանց համար նշանակում են այդ ուսումնական հաստատությունները կամ ոչ առևտրային կազմակերպությունները կամ օտարերկրյա պետությունները, միջազգային, միջպետական (միջկառավարական) կազմակերպությունները:

31. ՎՆԱՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ (ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ)

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 2.14 տողում

Նվազեցվող եկամուտներ են համարվում այն գումարները, որոնք օրենքով սահմանված կարգով ստացվում են որպես պատճառված վնասի փոխհատուցում, **բացառությամբ՝**

ԲԱՑ ԹՈՂՆՎԱԾ ԵԿԱՄՏԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ՀԱՄԱՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՐԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ, ՏՈՂ 1.2.16 ԵՎ 3.19

Նվազեցվող եկամուտներ են համարվում մասնավորապես գույքի կորստի կամ վնասվածքի (իրական վնասի), ինչպես նաև ոչ նյութական վնասի դեպքում ստացվող փոխհատուցման գումարները:

32. ՎԱՐԿԵՐ ԵՎ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ)

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 2.15 տողում

2.15 տողը կարող է չլրացվել, եթե **ընտանիքի անդամ չհանդիսացող** ֆիզիկական անձանցից հաշվետու տարվա ընթացքում միանվագ ստացված փոխառությունները չեն գերազանցել 1 մլն. դրամը: 1 մլն. դրամը գերազանցելու դեպքում լրացվում է ստացված ամբողջ գումարը:

Ընտանիքի անդամներ հանդիսացող ֆիզիկական անձանցից հաշվետու տարվա ընթացքում ստացված եկամուտները, անկախ գումարային մեծությունից, ընդհանրապես չեն լրացվում:

2.15 տողում վարկերը կարող են չլրացվել:

Նվազեցվող եկամուտներ են համարվում ստացվող վարկերի և փոխառությունների գումարները, **բացառությամբ՝**

ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԻ ԿԱՄ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՉԻՋՄԱՆ ԿԱՄ ՈՐԵՎԷ ԱՅԼ ՁԵՎՈՎ ԱՅԴ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՉՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ՀԵՏ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԼՐԱՆԱԼՈՒ ՊԱՀԻՆ), ՏՈՂ 1.2.16 ԵՎ 3.19:

ՉԻ ՀԱՄԱՐՎՈՒՄ ԵԿԱՄՈՒՏ

Եկամուտների ստացում չեն համարվում վարկերի և փոխառությունների գծով հաշվեգրված տոկոսների, հաշվարկված տույժերի և տուգանքների զիջման կամ որևէ այլ ձևով այդ գումարները չվերադարձնելու մասին պարտատիրոջ հետ համաձայնության դեպքերը:

Փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: Փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր: Փոխատուն իրավունք ունի փոխառության գումարից տոկոսներ ստանալ փոխառուից, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով: Փոխառության պայմանագրում հստակ պետք է սահմանվեն տոկոսների չափը և հաշվարկման կարգը:

Վարկային պայմանագրով բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը (վարկատուն) պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ (վարկ) տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից: Վարկային պայմանագիրը կնքվում է գրավոր:

ՕՐԻՆԱԿ 1

ՀՀ ռեզիդենտ Անին «Ա» բանկից 2025թ.-ի ընթացքում ստացել է վարկ՝ 9,0 մլն.դրամի չափով:

Անիի կողմից ստացված վարկը դասվում է այն նվազեցվող (չհարկվող) եկամուտների թվին, որոնք Հաշվարկում (Հայտարարագրում) չեն լրացվում:

Այնուամենայնիվ, եթե Անին ցանկանում է 9,0 մլն.դրամի չափով վարկը հայտարարագրել, ապա 2025թ.-ի համար հարկային մարմին ներկայացվող Հաշվարկում (Հայտարարագրում) այն լրացվում է հետևյալ կերպ՝

ՀԱՇՎԱՐԿ (ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ)

ԲԱԺԻՆ 2 ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Նվազեցվող եկամտի տեսակ		Եկամուտ (դրամ)
15. Վարկեր և փոխառություններ	2.15	9.000.000

ՕՐԻՆԱԿ 2

ՀՀ ռեզիդենտ Անին 2021թ.-ին «Ա» ՍՊԸ-ից ստացել է փոխառություն՝ 900,0 դրամի չափով: Ըստ կողմերի միջև կնքված պայմանագրի, փոխառության գումարն Անին պետք է ամբողջությամբ վերադարձնի 2023թ.-ի դեկտեմբերի 30-ին:

Սակայն սահմանված ժամկետներում, Անին չի վեդարձրել փոխառությունը և պայմանագրին համապատասխան Անիի նկատմամբ հաշվարկվել է տույժ՝ 50,0 հազ.դրամի չափով:

2024թ.-ի նոյեմբեր ամսին, Անիի և «Ա» ՍՊԸ-ի միջև կնքվել է պարտավորության զիջման մասին համաձայնագիր, որի համաձայն Անին վերադարձրել է փոխառության գործարը 800,0 դրամի չափով, իսկ փոխառության մնացած մասը՝ 100,0 հազ. դրամի չափով և հաշվարկված տույժը ընկերության կողմից զիջվել է:

Տվյալ դեպքում, Անիին զիջված փոխառության գումարից «Ա» ՍՊԸ-ն, որպես հարկային գործակալ, պետք է հաշվարկի և պահի եկամտային հարկ 20% դրույքաչափով:

2024թ.ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Անին զբաղեցրել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված պետական ծառայության պաշտոն, հետևաբար՝ պետք է հարկային մարմին ներկայացնի Հաշվարկ (Հայտարարագիր), որը լրացվում է հետևյալ կերպ՝

ՀԱՇՎԱՐԿ (ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ)

ԳԼՈՒԽ 2. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ

Եկամտի տեսակ		Հարկային գործակալի*		Ստացված եկամուտ (դրամ)	Եկամտային հարկ (դրամ)
		ՀՎՀՀ	Անվանում		
12. Այլ եկամուտներ	1.2.16	00000000	«Ա» ՍՊԸ	100.000*	20.000*

*Լրացվում է անձնավորված հաշվառման տեղեկատվական համակարգի կողմից՝ ինքնաշխատ

33. ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՑ ՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐՆԵՐ (ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ)

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 2.18 տողում

Նվազեցվող եկամուտներ են համարվում ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամից հատուցվող գումարները ***(«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենք):***

34. ԽՍՀՄ ԽՆԱՅԲԱՆԿՈՒՄ ԵՎ ՀԽՍՀ ԲԱՆԿՈՒՄ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 2.19 տողում

Նվազեցվող եկամուտ են համարվում ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրած դրամական ավանդների դիմաց փոխհատուցվող գումարները:

35. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՇՎԻՑ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵԳՐՎՈՂ ՏՈՒՅԺԵՐ

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 2.20 տողում

Նվազեցվող եկամուտ են համարվում հարկային պարտավորությունների մարման նպատակով միասնական հաշվին առկա գումարների վերադարձն ուշացնելու դեպքում ֆիզիկական անձի օգտին հաշվեգրվող տույժերը ***(ՀՀ հարկային օրենսգիրք, հոդված 327)***:

36. ՄԵԿ ՄԱՐԴԱՏԱՐ ՏԱՔՍԻ ԱՎՏՈՄՈԲԻԼՈՎ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 2.21 տողում

Նվազեցվող եկամուտներ են համարվում ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով փոխադրումներ իրականացնելու գործունեությունից ***(«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենք, հոդված 17)*** ստացվող եկամուտները:

Մարդատար-տաքսի ավտոմոբիլով փոխադրումներ կարող է կատարել տվյալ փոխադրումների և տեխնիկական վիճակի պահանջներին համապատասխան ավտոտրանսպորտային միջոց ունեցող ֆիզիկական անձը՝ լիցենզիայի առկայության դեպքում: Ֆիզիկական անձը մարդատար-տաքսի ավտոմոբիլով փոխադրումներ կարող է իրականացնել անձամբ՝ մեկ ավտոմոբիլով:

37. ԻՆՔՆԱՎԱՐ ԷՆԵՐԳԱԱՐՏԱԴՐՈՂԻ ՍՏԱՑՎՈՂ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ (ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ)

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 2.22 տողում

Նվազեցվող եկամուտներ են համարվում վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողի՝ էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձից ստացվող հատուցման գումարները, ինչպես նաև հավասար փոխհոսքերի դեպքում ինքնավար էներգաարտադրողի կողմից էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց էլեկտրական էներգիայի տեսքով ստացվող փոխհատուցումները:

38. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԻՑ (ԻՐԱՑՈՒՄԻՑ) ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ (ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ)

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 2.23 տողում

Նվազեցվող եկամուտներ են համարվում գյուղատնտեսական արտադրանք արտադրող ֆիզիկական անձանց՝ գյուղատնտեսական արտադրանքի մատակարարումից (իրացումից) ստացվող եկամուտները:

Գյուղատնտեսական արտադրանք են համարվում ֆիզիկական անձի կողմից իրականացված գործողությունների արդյունքում կենդանիների կամ բույսերի կենսաբանական վերափոխման միջոցով վերջնական կամ միջանկյալ սպառման համար ստացվող, մասնավորապես՝

- հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերը,
- տեխնիկական մշակաբույսերը, պալարապտղային, բանջարային, բոստանային մշակաբույսերը և փակ գրունտի արտադրանքը,
- դաշտային մշակման կերային մշակաբույսերը և կերարտադրության այլ արտադրանքը,
- պարտեզների, խաղողի այգիների, պտղատու այգիների, հատապտղանոցների և ծաղկաբուծության արտադրանքը,
- ծառերի և թփերի սերմերը, պտուղներում եղած սերմերը, ծառերի և թփերի սածիլները, ծառերի և թփերի տնկիները,
- տավարաբուծության, խոզաբուծության, ոչխարաբուծության, այծաբուծության, թռչնաբուծության, ձիաբուծության, գոմեշաբուծության, էշաբուծության և ջորիաբուծության արտադրանքը, եղջերվաբուծության, ջայլամաբուծության և ուղտաբուծության, ճագարաբուծության, մորթատու գազանաբուծության և որսորդական տնտեսության արտադրանքը, ձկնաբուծության, մեղվաբուծության, շերամաբուծության, արհեստական սերմնավորման արտադրանքը:

ՕՐԻՆԱԿ

Գյուղի բնակիչ Սամսոնը սեփականության իրավունքով իրեն պատկանող հողակտորի վրա 2025թ.-ի ընթացքում աճեցրել է ցորեն: Ցորենի մի մասը՝ վաճառվել է «Ա» ՍՊԸ-ին, որի դիմաց սպացել է 50,0 հազ. դրամ եկամուտ:

Տվյալ դեպքում, ցորենի դիմաց սպացված եկամուտը Սամսոնի համար հանդիսանում է նվազեցվող եկամուտ (ենթակա չէ հարկման), քանի որ սպացվել է գյուղատնտեսական արտադրանքի մատակարարումից:

ՀԱՇՎԱՐԿ (ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ)

ԲԱԺԻՆ 2 ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Նվազեցվող եկամտի տեսակ		Եկամուտ (դրամ)
23. Գյուղատնտեսական արտադրանքի մատակարարումից (իրացումից) ստացվող եկամուտներ	2.23	50.000

39. ԱՐԺԵԹՂԹԵՐԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ)

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 2.24 տողում

Արժեթղթերից ստացվող նվազեցվող եկամուտներն են՝

- գանձապետական պարտատոմսերի, պետական այլ արժեթղթերի և Համահայկական բանկի թողարկած պարտատոմսերի գծով ստացվող տոկոսը, մարման ժամանակ ստացվող զեղչը կամ օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտը.
- կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում մասնակցության (բաժնետոմսի, բաժնեմասի, փայաբաժնի) կամ ներդրում վկայող այլ արժեթղթերի օտարումից, այլ արժեթղթերի հետ փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտը.
- ներդրումային ֆոնդերում մասնակցությունը հավաստող արժեթղթերից ստացվող եկամուտը (այդ թվում՝ դրանց օտարումից, փոխանակումից, նման այլ գործարքներից, ինչպես նաև պայմանագրային ներդրումային ֆոնդի ակտիվների հաշվին կատարված գործարքներից).
- ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից, պարտատոմսերից կամ ներդրումը վկայող այլ արժեթղթերից ստացվող եկամուտը: Ընդ որում, նշվածը վերաբերում է այն բաժնետոմսերին, պարտատոմսերին, ներդրումը վկայող այլ արժեթղթերին, որոնք ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակվել (առևտրին թույլատրվել) են ոչ ուշ, քան 2024թ.-ի դեկտեմբերի 31-ը: **Բացառություն են կազմում՝**

ԲԱՆԿԵՐԻ ԹՈՂԱՐԿՎԱԾ ԱՅՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏԸ (ՀԱՐԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ), ՈՐՈՆՑ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՊԱՀԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԱՐՈՒՄՆ ԸՆԿԱԾ ԺԱՄԿԵՏԸ ՊԱԿԱՍ Է 2 ՏԱՐՈՒՑ:

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 1.2.16 տողում, եթե եկամուտը ստացվում է հարկային գործակալից:

ԱՐԺԵԹՂԹԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ՀԱՄԱՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՐԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ՝

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 1.2.16 տողում, եթե եկամուտը ստացվել է հարկային գործակալից:

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 3.19 տողում, եթե եկամուտը ստացվել է հարկային գործակալ չհանդիսացողից, (այդ թվում՝ եկամտային հարկի հաշվարկման (վճարման) պարտավորությունից ազատված հարկային գործակալից):

- եթե այդ եկամուտները ստացվում են որպես վճարման միջոց տրված մուրհակի, վճարագրի կամ վճարային այլ արժեթղթի օտարումից.
- եթե ստացվում են որպես ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման դիմաց հատուցում կամ փոխարինում են այդ հատուցմանը՝ անկախ արժեթղթի դիմաց իրական ներդրման կամ փոխատվության փաստի առկայությունից.

ԱՐԺԵԹՂԹԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ՀԱՄԱՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՐԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ՝

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 3.15 տողում

- եթե ստացվում են կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում շենքի, բնակարանի, առանձնատան կամ այլ շինության (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց) ձևով մասնակցության (բաժնետոմսի, բաժնեմասի, փայաբաժնի) կամ ներդրում վկայող այլ արժեթղթերի օտարումից, եթե այդ օտարումը կատարվում է կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում այդ մասնակցությունը (բաժնետոմսը, բաժնեմասը, փայաբաժինը) ձեռք բերելու օրը ներառող հարկային տարվա կամ դրան հաջորդող երեք հարկային տարիների ընթացքում.

ԱՐԺԵԹՂԹԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ՀԱՄԱՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՐԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ՝

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 1.2.8 տողում, եթե եկամուտը ստացվում է հարկային գործակալից:

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 3.12 տողում, եթե եկամուտը ստացվում է հարկային գործակալ չհանդիսացողից:

- եթե ստացվում են որպես շահաբաժին, **բացառությամբ՝**

ՆՎԱՋԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ՝

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 2.24 տողում

ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից ստացվող շահաբաժինների: Ընդ որում, նշվածը վերաբերում է այն բաժնետոմսերին, պարտատոմսերին, ներդրումը վկայող այլ արժեթղթերին, որոնք ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակվել (առևտրին թույլատրվել) են ոչ ուշ, քան 2024թ.-ի դեկտեմբերի 31-ը:

ՕՐԻՆԱԿ 1

ՀՀ ռեզիդենտ Տիգրանը հանդիսանում է ռեզիդենտ «Ա» ՍՊԸ-ի միակ մասնակից (սեփականատեր): Ընդ որում, բաժնեմասերը չեն հանդիսանում ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում շինության ներդրումը վկայող բաժնեմասեր:

Միաժամանակ Տիգրանը ձեռք է բերել պետության կողմից թողարկված պարտպատոմսեր:

2025թ.-ին Տիգրանը վաճառել է իր մասնակցությունը հաստատող բաժնեմասերի որոշ քանակն այլ ֆիզիկական անձին՝ 50,0 մլն. դրամով: Ընդ որում, բաժնեմասերի օտարման գործարքը չի կատարվել Օրենսգրքի 149-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված որևէ հիմքով:

Նույն թվականի ընթացքում պետության կողմից թողարկված պարտպատոմսերից, Տիգրանը ստացել է տոկոսներ՝ 400,0 հազ.դրամի չափով:

Տվյալ դեպքում, բաժնետոմսերի վաճառքից և պարտպատոմսերից ստացվող եկամուտները համարվում են նվազեցվող եկամուտ (ենթակա չեն հարկման), հետևաբար՝ 2025թ.-ի համար, հարկային մարմին ներկայացվող Հաշվարկում (Հայտարարագրում) Տիգրանը նշված եկամուտները լրացնում է հետևյալ կերպ՝

ՀԱՇՎԱՐԿ (ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ)

ԲԱԺԻՆ 2 ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Նվազեցվող եկամտի տեսակ		Եկամուտ (դրամ)
24. Արժեթղթերից եկամուտներ	2.24	50.400.000*

*50400000 = (50.000.000 + 400.000)

ՕՐԻՆԱԿ 2

ՀՀ ռեզիդենտ Տիգրանը հանդիսանում է «Ա» ՍՊԸ-ի միակ մասնակից (սեփականատեր): Ընկերությունը հիմնադրվել է 2025թ.-ի հունվար ամսին, կանոնադրական կապիտալի մեծությունը կազմում է 20,0 մլն. դրամ և այն ձևավորվել է Տիգրանի կողմից շինության ներդրման արդյունքում:

2025թ.-ի դեկտեմբերին Տիգրանը ընկերության բաժնեմասերն ամբողջությամբ՝ 25,0 մլն.դրամով վաճառել է ֆիզիկական անձ Անիին:

Քանի որ տվյալ դեպքում, Տիգրանի եկամուտը ստացվում է ընկերության կանոնադրական կապիտալում շինության ներդրումը վկայող բաժնեմասերի օտարումից և այդ օտարումը կատարվել է նույն հարկային տարվա ընթացքում, հետևաբար՝ Տիգրանի ստացված եկամուտը ձևավորում է եկամտային հարկով հարկվող օբյեկտ և ենթակա է հարկման 10% դրույթաչափով:

Ընդ որում, վերը նշվածը վերաբերում է նաև այն դեպքերին, երբ օտարումը տեղի ունենար ներդրման տարվանը հաջորդող 3 հարկային տարիների ընթացքում:

2025թ.-ի համար, Տիգրանի կողմից հարկային մարմին ներկայացվող Հաշվարկում (Հայտարարագրում) նշված եկամուտը արտացոլվում է հետևյալ կերպ՝

ՀԱՇՎԱՐԿ (ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ)

ԲԱԺԻՆ 3. ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ (ՍՏԱՑՎԱԾ) ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿ

Եկամտի տեսակ		Եկամուտ (դրամ) 3.1	Դրույքաչափ 3.2	Եկամտային հարկ (դրամ) 3.3
12) կանոնադրական կամ կապիտալում մասնակցության (բաժնետոմսի, բաժնեմասի, փայաբաժնի) կամ ներդրում վկայող այլ արժեթղթերի օտարման դիմաց եկամուտ	3.15	25.000.000	10%	2.500.000

40. ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ (ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ)

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարագրի) 2.25 տողում

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի հիման վրա ֆիզիկական անձանց վճարվող հատուցման գումարները:

ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման դեպքերը, շահառուների շրջանակը, հատուցման չափերը և վճարման կարգը սահմանված են ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի N 86-Ն որոշմամբ:

41. ԱՅԼ ՆՎԱԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Լրացվում է Հաշվարկ (Հայտարարգրի) 2.26 տողում

> Այնուամենայնիվ, 2.26 տողում ստորև ներկայացված եկամուտները կարող են չլրացվել:

Բացառություն են կազմում զոհված զինծառայողների ընտանիքների անդամների և հաշմանդամ դարձած զինծառայողների՝ ՀՀ օրենսդրության համաձայն ստացվող միանվագ վճարները, որոնք ենթակա են պարտադիր լրացման

Այլ նվազեցվող եկամուտների թվին են դասվում՝

- «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով կուտակային կենսաթոշակային բաղադրիչի շրջանակներում ֆիզիկական անձի համար (օգտին) կատարվող կուտակային հատկացումների հաշվին մինչև կուտակային կենսաթոշակ ստանալու իրավունքի ձեռքբերման՝ օրենքով սահմանված ժամկետը լրանալը ստացվող եկամուտները:
- Զինծառայողներին և նրանց հավասարեցված անձանց համար կատարվող աշխատանքները, նրանց մատուցվող ծառայությունները կամ նրանց՝ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացվող եկամուտները, ինչպես նաև պարտադիր ժամկետային զինծառայողների (ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտների) ստացվող դրամական ապահովությունը ***(«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք, Հոդվածներ 64-66)***:
- ՀՀ ազգային հավաքականի կազմում միջազգային մրցույթներում հաղթած մարզիկների և մարզիչների մրցանակները:
- Պետական պարգևները (մրցանակները):
- Գործատուների կողմից իրենց վարձու աշխատողների առողջության ապահովագրության համար կատարվող ապահովագրավճարները՝ յուրաքանչյուր վարձու աշխատողի համար եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա հաշվով մինչև 10հազ. դրամի չափով):
- Զոհված զինծառայողների ընտանիքների անդամների և հաշմանդամ դարձած զինծառայողների՝ ՀՀ օրենսդրության համաձայն ստացվող միանվագ վճարները: